

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի ուղերձը ՀՀ Անկախության տոնի առթիվ

Հարգելի հայրենակիցներ

Հայ ժողովուրդը 1991 թվականի սեպտեմբերի 21-ին համազգային պայքարի շնորհիվ վերագտավ ու վերանվաճեց Անկախ պետականությունը՝ մեր հայրենիքի ու ազգի գոյապահպանության գլխավոր առհավատյան: Տասնյակ հազարավոր հայորդիների կյանքի ու արյան գնով ամրագրված հաղթանակը դեռ երկար-

երկար կփառավորի ոչմիայն մեր գոյապայքարի եւ արժանապատիվ կյանքի ուղին, ալ նաեւ՝ հայոց անպարտ, խաղաղ ու ստեղծագործ գալիքները: Հայաստանի Հանրապետության Անկախության տոնի առթիվ շնորհավորում եմ մարզի բնակչությանը, ցանկանում երկար տարիների խաղաղ ու երջանիկ կյանք, անսպառ հաջողություններ, բարեկեցիկ ու ապահով հայրենիք:

Ջերմ բարեմաղթանքներով՝

Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյան

